

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 37/5

18 սեպտեմբերի 2012թ.

Քննարկվեց քաղաքացի Արսեն Միրզոյանի 10.09.2012թ. առարկությունները «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 18.05.2012թ. թիվ 1410600 արձանագրության և «ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ պետի 31.05.2012թ-ի թիվ 184432 որոշման դեմ:

«ԿԱ ՊԵԿ ՕՇՎ աշխատակիցների կողմից 18.05.2012թ-ին կազմվել է թիվ 1410600 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է, որ Արսեն Վուրդիայի Միրզոյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող «ՎԱՁ 21-099» մակնիշի 23LՍ975 պետհամարանիշի մարդատար ավտոմեքենայով 2011թ. ընթացքում զբաղվել է տաքսի ծառայություն գործունեությամբ, չունենալով համապատասխան պետական գրանցում և լիցենզիա: Իր ապօրինի գործունեության ընթացքում ընդհանուր հասույթը կազմել է 5000 դրամ:

Ելնելով վերոգրյալից կիրառվել են «Հարկերի մասին» «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ» օրենքի 26-րդ հոդվածով և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ գումարով 87.500 դրամ:

Վերոգրյալ խախտման համար Արսեն Միրզոյանը «ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ պետի 31.05.2012թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 184432 որոշմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ» օրենսգրքի 169-րդ հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

«ԿԱ ՊԵԿ» հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ քաղաքացի Արսեն Միրզոյանի 10.09.2012թ. առարկությունների հիման վրա «ԿԱ ՊԵԿ» պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

«ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ կողմից վարչական ակտով առաջադրված գումարը բռնագանձելու նպատակով 26.07.2012թ-ին «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ» վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում՝ Արսեն Վուրդիայի Միրզոյանից 107.500 դրամ վճարելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջի վերաբերյալ: «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ» վարչական դատարանը 31.07.2012թ-ին արձակել է վճարման կարգադրություն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ»-ում հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի դրույթներով քաղաքացի Արսեն Միրզոյանի առարկությունների հիման վրա «ԿԱ ՊԵԿ»-ում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ» օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Քաղաքացի Արսեն Միրզոյանի 10.09.2012թ. առարկությունների հիման վրա «ԿԱ ՊԵԿ» պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ